Ներկայացվում է յուրաքանչյուր ամիս մինչև հաջորդող ամսվա 5-ը

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և մարմնի ղեկավարի կողմից կատարած քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2018 թվականի հունիս ամսվա ընթացքում քաղաքացիներից ստացվել է թվով 66 առաջարկություն, դիմում և բողոք, որից 30-ը վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից.

Դիմումներն ըստ բնույթի	Ընդամենը	Պատաս-խանվել է	որից			Ծանոթություն
			Տրվել է դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պարզաբանում	
Աշխատանքի ընդունելու մասին	5	5			5	1 դիմումատուի տեղեկացվել է, որ համաձայն «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ հասարակական հիմունքներով նախարարի խորհրդականի հաստիքը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի համաձայնությամբ: Հաշվի առնելով կաթնամթերքի արտադրության և իրացման ոլորտում դիմումատուի փորձառությունը հասարակական հիմունքներով խորհրդականի հաստիքի առկայության դեպքում նրա կողմից ներկայացված առաջարկը կքննարկվի:

						2 դիմումատուի տեղեկացվել է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է քաղաքացիական ծառայության համակարգը, ըստ որի թափուր պաշտոններում նշանակվում են մրցութային կարգով: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուներին, որ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում առկա քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնելու վերաբերյալ հայտարարարությունները տեղակայվում են «Հանրային ծառայություն» շաբաթաթերթում և քաղաքացիական ծառայության խորհրդի ինտերնետային կայքում: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ նրա դիմումը ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում ընդունվել է ի գիտություն և Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի Շողակաթ համայնքում համապատասխան աշխատատեղի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում նրան աշխատանքի ընդունելու հարցը կքննարկվի և արդյունքների մասին կտեղեկացվի: 1 դիմումատուի տեղեկացվել է,

						որ անտառային ոլորտի որևէ կազմակերությունում աշխատանքի ընդունելու վերաբերյալ նրա դիմումը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2018 թվականի հունիսի 7-ի N ԱԽ/ԱԲ-2/5038-18/ գրությամբ վերահաստատագրվել է ՀՀ բնապահպանության նախարարություն:
Աշխատած տարիների վերաբերյալ տեղեկանք տրամադրելու մասին	4	4	1		3	3 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց կողմից հայցվող կազմակերպությունների՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի գյուղատնտեսության վարչության, «Ջրշին» պետական շինարարական ձեռնարկության և Տաշիրի շրջանի անասնաբուժական սահմանային հսկիչ կետի պետական պահպանության ենթակա փաստաթղթերը ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի արխիվ պահպանության չեն հանձնվել: Հետևաբար արխիվային տեղեկանք հնարավոր չէ տրամադրել:
Արտերկրից ներկրված տոհմային երինջների խմբաքանակից երինջներ հատկացնելու, ձեռք բերված երինջների դիմաց գումարի վճարման համար աջակցություն ցուցաբե-	5	2			2	3 դիմում ընթացքի մեջ է: 2 դիմումատուի տեղեկացվել է, որ Հայաստանի Հանրապետությունում 2007-2015 թվականներին տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում եվրոպական երկրներից Հայաստանի Հանրապետություն ներկրված

ռելու մասին						տոհմային երինջների բաշխման գործընթացն ավարտվել է: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուներին, որ նրանց դիմումները վերցված են հաշվառման և տավարաբուծության զարգացման նոր ծրագիր իրականացնելու դեպքում՝ երինջների բաշխման հանձնաժողովի կողմից տրված դրական եզրակացության հիման վրա նրանց տարաժամկետ վճարման պայմանով կտրամադրվեն տոհմային երինջներ:
Հայաստանում այգեգործությունը զարգացնելու մասին	1	1			1	1 դիմումատուի առաջարկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում քննարկելու նպատակով ներկայացնել հիմնավորված հաշվարկներով ծրագրային առաջարկ:
Ոռոգման ջրի մատակարարումը կարգավորելու, ոռոգման ռեժիմը փոխելու և ջրի վարձաչափը վերանայելու մասին	2	2			2	2 դիմումատուի տեղեկացվել է, որ ոռոգման ջրի մատակարարման վերաբերյալ նրանց դիմումները վերահասցեագրվել են ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումներում բարձրացված հարցերը վերջինիս իրավասության ներքո են:
Խոզերի անկման պատճառը պարզելու և հիվանդության դեմ կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության մասնագետ-տեսուչները սույն թվականի հունիսի 7-ին այցելել են Աչաջուր համայնքում գտնվող նրա տնտե-

						սություն և իրականացրել են անասնագոմում առկա 19 գլուխ խոզերի ջերմաչափում և կլինիկական զննում, որի արդյունքում հիվանդ կենդանիներ չեն հայտնաբերվել: Ծառայության մասնագետների կողմից տրվել են համապատասխան ցուցումներ՝ կենդանիների պահման վայրերի մաքրման, պարբերաբար ախտահանության իրականացման և տարածքը բավարար սանիտարա-հիգիենիկ վիճակում պահելու վերաբերյալ:
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի վարչական տուգանք նշանակելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, ոլորտում տեղ գտած խնդիրների լուծմանն աջակցություն ցուցաբերելու մասին	3	2			2	1 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ 267-Ն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ տեսչական մարմինների և դրանց ծառայողների գործողությունների կամ անգործության,, այդ թվում նաև պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտը կարող է բողոքարկվել ակտն ընդունած տեսչական մարմնին կամ դատարան: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության իրավահաջորդը

						ՀՀ կառավարությանն ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինն է, ուստի ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը իրավասու չէ վերադասության կարգով իրականացնել դիմում- բողոքի քննությունը: Դիմումատուին տեղեկացվել է նաև որ նրա դիմումը վերահասցեագրվել է ՀՀ կառավարության ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին: 1 դիմումատուի տեղեկացվել է, որ ՀՀ կառավարության 05.04.-2018 թվականի N366-Ն որոշմամբ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության գործառույթներն այսուհետ իրականացվելու են ՀՀ կառավարությանն ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից, որն իր գործունեությունը պետք է իրականացնի բացառապես «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ սննդամթերքի անվտանգության ոլորտի բարեփոխումներ իրականացնելու ընթացքում կդիտարկվի նաև նրա հետ համագործակցության հնարավորությունը:

Գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Քիմոնի (չաման) իրացման հարցում օժանդակություն ցուցաբերելու մասին	1	1	1			
Գյուղատնտեսության զարգացման ծրագրային առաջարկների իրականացմանն աջակցություն ցուցաբերելու մասին	5	1			1	4 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմումատուի տեղեկացվել է, որ 2018 թվականի հունիսի 13-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կայացած քննարկման ժամանակ ծրագրային առաջարկի վերաբերյալ նրան տրվել են պարզաբանումներ և խորհրդատվություն:
Լալվարի անտառտնտեսությունում կատարվող ապօրինի ծառահատումների մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Իր կողմից սեփականաշնորհված վարելահողի ապօրինի օգտագործումը կանխելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու գործում օժանդակություն մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Կոմբայն հատկացնելու	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ

մասին						գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով՝ լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկա մատակարարելու նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 16-ի N11 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագիրը» Վերջինիս շրջանակներում տնտեսավարողները հնարավորություն ունեն ձեռք բերել հացահատիկային կոմբայն՝ 10 տարի մարման ժամկետով և լիզինգի տարեկան 9% տոկոսադրույքով, որի 7 տոկոսային կետը սուբսիդավորվում է պետության կողմից: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու պայմաններին առավել մանրամասն կարող է ծանոթանալ ՀՀ գյուղատնտեսության նախարարության www.minagro.am կայքում կամ կարող է դիմել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի

						մարզային կառույցներին ու «ԱԳԲԱ լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ին:
Ներմուծված առվույտի սերմի մաքսազերծման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ համաձայն «Սերմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի դրույթի՝ սերմերի ներմուծումը Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է, եթե սերմերը նախատեսված են գիտահետազոտական աշխատանքների և սորտափորձարկման նպատակների համար ու ներմուծվող սորտը գրանցված է օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի ցանկում, ինչպես նաև առկա են արտահանող երկրի իրավասու կազմակերպության կողմից տրված հավաստագրերը: Հաշվի առնելով վերոգրյալը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը առվույտի սերմացուի Հայաստանի Հանրապետություն ներմուծման հարցում աջակցություն չի կարող ցուցաբերել:
Պտղատու և դեկորատիվ ծառերի տնկիներ հատկացնելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ սկսած 2013 թվականից նրան և նույն հասցեում բնակվող Գրիզելտա Մանուկյանին տրամադրվել են պտղատու և դեկորատիվ ծառերի տնկիներ, որոնց դիմաց նա ներկայացրել է ստացական: Միաժամանակ կրկին անգամ

						տեղեկացվել է դիմումատուին, որ հանրապետությունում տնկանյութի արտադրությունը և իրացումն իրականացվում է մասնավոր տնտեսավարողների կողմից և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տնկանյութի պաշարների չի տնօրինում:
Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների օգտագործումն արգելելու ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին	1	1	1			
ՀՀ կառավարության 11.05.2002 թվականի «Գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա բնակելի, հասարակական, արտադրական նշանակության շենքերի և շինություններ-ի կառուցումը սահմանափակելու մասին» N 498 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը նրա կողմից նրկայացրած առաջարկությունը հաշվի կառնի:
Սերմերի և ագրոքիմիկատների խանութներում	1					1 դիմում ընթացքի մեջ է:

անորակ դեղորայքի վաճառքն արգելելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին						
Ընդամենը	66	31	3		28	35 դիմում ընթացքի մեջ է:
Որից՝ ՀՀ կառավարության աշխատակազմից վերահասցեագրված						
Արարատյան դաշտավայրի հողերում կարանտին հիվանդությունների և վնասատուների դեմ դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում 2018 թվականի հունիսի 13-ին կայացած քննարկման ժամանակ նրան տրվել են հողերի կարանտին հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի վերաբերյալ պարզաբանումներ և խորհրդատվություն:
Խաղողի այգու մեքենայական թաղման և բացման գյուտի ներդրման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարի մոտ 2018 թվականի մայիսի 30-ին կայացած հանդիպման ընթացքում նրա նույնաբովանդակ դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ տրվել են պարզաբանումներ: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում է միայն նպատակային ծրագրեր իրականացնելու համար:
Կաթի մթերման գնի	1					1 դիմում ընթացքի մեջ է:

իջեցումը կանխելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին						
Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրային առաջարկների իրականացման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	10	1			1	9 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմում ՀՀ կառավարության կողմից ուղարկվել է ի տնօրինություն: Դիմումին պատասխանելու անհրաժեշտությունը բացակայում է:
Աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած կենդանիների դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից ստուգումների անցկացման գործում թույլ տրված խախտումների մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
«Վինար» ՍՊԸ-ի կողմից մթերված խաղողի դիմաց գումարը վճարելու գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:

Ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու, վերցրված վարկի մարման գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	9	4			4	5 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմումումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հաստատված կարգի համաձայն սուբսիդավորվող վարկերը տրամադրվում են բացառապես գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով: Վարկերի տրամադրման հարցում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն իրավասու չէ միջամտել հանրապետությունում գործող առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությանը: Վերջիններս ամբողջությամբ կրում են վարկային ռիսկի պատասխանատվությունը, հետևաբար նրանք են ընտրում վարկ ստացող անձանց, որոնց գործունեությունը համապատասխանում է իրենց վարկավորման կարգին: 3 դիմումատուի պարզաբանվել է, որ հանրապետության բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց տրված և մինչև 2018 թվականի մայիսի 31-ն անհուսալի ճանաչված վարկերի գծով հաշվարկված տուժանքները զիջելու նպատակով 2018 թվականի հունիսի 21-ին ՀՀ

						Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
Անասնաբուծությամբ զբաղվելու նպատակով խոշոր եղջերավոր կենդանիներ հատկացնելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Աշխատանքի ընդունման գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Կարկուտի հետևանքով կրած վնասը փոխհատուցելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Արտերկրից Հայաստան թարմ մրգերի ներկրում, ինչպես նաև Հայաստանից Ռուսաստան և ԵՄ թարմ մրգերի արտահանում իրականացնելու գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:

Կարտոֆիլի տնկանյութ և պարարտանյութ ձեռք բերելու համար աջակցություն ցուցաբերելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Ընդամենը	30	7			7	23 դիմում ընթացքի մեջ է:

2018 թվականի հունիս ամսվա ընթացքում կատարվել է քաղաքացիների 14 ընդունելություն, որից մարմնի ղեկավարի մոտ 9 ընդունելություն:

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Տրվել է դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պարզաբանում	Ծանոթություն
Մթերված խաղողի արժեքի վճարման հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	4	4			
Այգի հիմնելու համար աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն առաջարկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել հիմնավորված հաշվարկներով ծրագիր:
Ընդամենը	14	4		10	
այդ թվում անձամբ մարմնի ղեկավարի կողմից կատարած ընդունելության արդյունքները					
Ներմուծված տոհմային երինջների դիմաց վճարումների ժամանակացույցում փոփոխություն կատարելու մասին	2			2	2 քաղաքացու պարզաբանվել է, որ տոհմային երինջների դիմաց վճարումների ժամանակացույցը սահմանված է ՀՀ տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակում շահառուների հետ կնքված առքուվաճառքի պայմանագրերով և դրա կազմման համար հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 1-ի N 1289-Ա որոշմամբ հաստատված տարաժամկետ վճարման ժամկետները և պայմանները: Միաժամանակ տեղեկացվել է քաղաքացիներին, որ ներկայումս քննարկվում է ծրագրի շրջանակներում

					ժամկետանց պարտավորություններ ունեցող շահառուների նկատմամբ հաշվարկված տույժերը ներելու հնարավորության հարցը:
Բույսերի պաշտպանության միջոցների ներկրման ընթացակարգը դյուրացնելու, նմուշառման համար որոշակի խմբաքանակ սահմանելու, նմուշները հավատարմագրված այլ լաբորատորիաներում փորձաքննության ենթարկելու, լաբորատոր փորձաքննության և ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ի բուսասանիտարիայի տեսչության կողմից եզրակացության տրամադրման համար 24 ժամ սահմանելու վերաբերյալ առաջարկությունների մասին	1			1	ՀՀ կառավարությանն ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի բուսասանիտարիայի տեսչության պետ Ա. Նիկոյանը քաղաքացուն տեղեկացրել է, որ նրա կողմից ներկայացված բոլոր առաջարկները հանգամանորեն կուսումնասիրվեն և կտրվեն համապատասխան լուծումներ:
Աշխատանքով ապահովելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում գործում է քաղաքացիական ծառայության համակարգը, ըստ որի թափուր պաշտոններում նշանակվում են մրցութային կարգով, սակայն նախարարության համակարգի կազմակերպություններում համապատասխան թափուր հաստիքի առկայության դեպքում նրա խնդրանքը կբավարարվի:
Ջերմոցային տնտեսություն հիմնելու համար աջակցություն տրամադրելու մասին	1			1	Քաղաքացուն առաջարկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել ջերմոցային տնտեսության հիմնման հաշվակներով հիմնավորված

					ծրագիր:
Գյուղատնտեսական սարքավորումների, խողովակների, պոլիէթիլենային թաղանթների արտադրության կազմակերպման ծրագրի ֆինանսավորման հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ հարցը քննարկելու համար անհրաժեշտ է ներկայացնել ծրագրի արդյունավետությունը հիմնավորող փաստաթղթեր, որի մասին նրան տեղեկացվել է նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալի 2018 թվականի հունվարի 31-ի գրությամբ, որն ուղարկվել է ի պատասխան քաղաքացու կողմից ՀՀ վարչապետին ուղղված 2017 թվականի դեկտեմբերի 15-ի նույնաբովանդակ դիմումի:
Վարձակալած հողի նպատակային նշանակության փոփոխություն կատարելու գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ հողերի նպատակային նշանակության փոփոխություն կատարելու հարցը դուրս է ՀՀ գյուղատնտեսության նախարարության լիազորությունների շրջանակից:
Վարկային պարտավորությունները չկատարելու պատճառով ֆինանսական կառույցների կողմից կիրառված տույժ-տուգանքները վերանայելու մասին	2			2	2 քաղաքացու պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը առևտրային բանկերի և կազմակերպությունների գործունեությանը միջամտելու իրավասություն չունի: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց տրված և մինչև 2018 թվականի մայիսի 31-ն անհուսալի ճանաչված վարկերի գծով հաշվարկված տուժանքները զիջելու նպատակով 2018 թվականի հունիսի 21-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ

					ընդունվել է « Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
Ընդամենը	9			9	